

երկրպագութիւն Սրբոյ Տաճարի Յարութեան Քրիստոսի, մեծի աշխարհամատրան եկեղեցւոյն¹. որ է մայր մեր եւ ծնող ըստ արարչութեան, ըստ փրկութեան եւ ըստ նորոգման. իսկ եւ գահ տիեզերածագ, ընդհանրածաւալ Վաթողիկէ, այլ եւ տան եւ տեղի եւ օթարան, զենարան, դամբարան եւ բնակարան մարմնացելոյ բանին Աստուծոյ:

Եւ թէպէտ՝ ամենայն եկեղեցեաց ասին այսպիսիքս իսկապէս, սակայն՝ համայնք եւ սմանէ ընկալան եւ սովիմբ եղեն եւ են եւ լինելոց են: Չոր օրինակ ամենայն շարժեալք յանշարժ շարժողէն, որպէս երկնայինքն՝ յաթոռոցն, լուսաւորքն՝ յարեգականէն, էակք ամենայն՝ յանեղ էակէն, գոյացեալքն՝ ի միոյ գոյակէն, անհատքն՝ ի տեսակէն, տեսակքն՝ ի սեռէն, եւ սեռքն՝ ի սեռականագունէն: Եւ սա է որ մինչ վերինն Սիօն զարդարեալ իջանէ ի ստորինս, ժողովէ առ ինքն զամենայն եկեղեցիս, որպէս մայր զգաւական աստեղանշոյլս եւ արեգականափայլս, ի սնարան եւ ի կաթնամատոյց մաքուր եւ լուսասփիւռ ծոցի իւրում, եւ հանգերձ զաւակօք ժողովեցելովք միանայ ընդ վերինն Սիօն եւ նովիմբ ընդ փեսային իւր²:

1 Աշխարհամարտաւն կը նշանակէ բոլոր քրիստոնէութեան մատուռը, որ Երուսաղէմի մէջ առաքելոց ձեռքով հաստատուած առաջին մատուռն է (Հմմտ. Վանոնք Մանգակունւոյ): Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարը աշխարհամարտաւն կ'ըսուի որովհետեւ բոլոր քրիստոնէութեան եկեղեցին է եւ ոչ մասնաւոր ազգի մը:

Այլոս քերականական եւ հռետորական բացատրութիւններ կը գործածէ Ս. Յարութեան՝ աշխարհամարտաւն կամ աշխարհափիլիշիէ նշանակութիւնը ցուցնելու համար: Հայ Ս. Եկեղեցին Չատկի Գրդ Վերակին կը տօնէ աշխարհամարտաւն յիշատակը (Հմմտ. իմ Ժող. Տնայոյց էջ 54):

2 Կը յիշեմ Երուսաղէմի եւ մանաւանդ Ս. Յարութեան նուիրուած հնագոյն հատուած մը, ուր Կողտի սրտազրաւ ըղձանքը կը նկարագրուի ոսկի գրչով մը: